ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ ...... 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ ... 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ ... ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճանիճներ — առն ազատութեան ճանապարհը:

Ժողովո՛ւրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 9. ՅՈՒՆՎԱՐ. Nr 9. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՀԻՆ ԱՌԱԿ

Մահմետական կանաչ փաթթոցն անգլիակա՞ն գլխի վրայ... Զը տեսնուա՞ծ բան, և սակայն դա ճշմարտութիւն է... Եւ այն էլ ի՞նչ գլուխ: Անգլիական երեսփոխանական ժողովի մէկ անդամի, անգլիական ազատ ազգի մի պաշտօնական ներկայացուցչի պատկառելի գլխի վրայ... Այդ պատկառելի Անգլիացին մահմետական է դարձել ամեն բանով՝ գլխով սրտով ու ոտքով, եթէ ոչ կրօնքով, թէև այս վերջինն այդ նորատեսակ մահմեդականի համար թերևս աւելի թոյլ՚ինք ունի... բաղդակնութեան պատճառով... Բայց եւրոպական, փափկասիրտ բուրժուաններն այդ բաղդից էլ զուրկ չեն բնաւ իրապէս, թէև զուրկ են իրաւապէս...

Այսպէս, այն պատկառելի երեսփոխանը մահմեդական է դարձել, և հայերիս համար միշտ — ամբողջ երկու-երեք տարի շարունակ — աւելի մահմեդական է եղել, քան ինքը Մեծ Թիւրքը: Իր հօրից էլ այդ պատկառելին արդէն ստացել է մահմեդական անուն — Ահմէդ... մականունն է Բարթլէտ... Իր սիրտը միշտ խփած է բաբախել Մեծ Մարդասպանի համար. նրա շահերի ու նրա տէրութեան պաշտպանն է եղել այդ պատկառելի երեսփոխանը, որ փրփուրը բերանին է միշտ խօսել Հայերիս դէմ...

Այդ Ահմէդ պատկառելին անցեալները գնացել է Կ. Պոլիս իր սուլթանին այցելութեան: Այս վերջին հրէշն այնքան ըղձացվել է նրա ռանալէզութիւնից ու գլխախառնութիւնից, որ մի շքանշան է կախել իր սիրեցեալ Ահմէդի վզից...

Խե՜ղճ Ահմէդ, պատկառելի՜ Ահմէդ, մահմեդակա՞ն Ահմէդ, անգլիական ժողովրդի աչքին այդ օրից ի վեր նրա մարմինը ճօճվում է՝ օդում կախված՝ այդ համիդական շքանշանից...

Պատմութիւնն ամենքին վարձատրում է արժանիքի համեմատ — դա արդէն հին առակ է:

*
* *

Աշխարհիս մեծամեծները — տէրութիւններ, Անգլիան և Իտալիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, Գերմանիան և Աւստրիան, դաշնակցեցան միասին Արևելեան խնդրի հանգոյցը „բանալու“ համար: Ամեն կերպ նրանք խօսեցին, աջ ու ձախ էլ քննեցին, իրար հետ էլ գժտվեցան ու պագտվեցան, բայց հանգոյցը մնում է դեռ հանգոյց... Իրանց նոր դաշնակցութիւնը — Կօնցէրտը — սրտաշարժ է, ինչպէս և նրանց հայեացքը: Միաձայն կրկնում են, որ Թիւրքիայի ամբողջութիւնը պէտք է պահպանվէ. կատաղած գազանները մի կտոր միսն իրար մէջ չեն կարող բաժանել. ամենքն էլ աղահ են: Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանել. գգայո՞ւն սրտեր. բայց հանգո՞յցը... դրա ամբողջութիւնն էլ պահպանել... Յետո՞յ... Յետոյ գործը կը վերջանայ վեց Մեծերի կօնցէրտի միաձայն երգեցողութեամբ Ֆրանսիական օպէրէտային մի երգի... հայկական արեան անընդհատ հոսող գետի հրնչիւնների տակ... Մեծ Մարդասպանի գոյութեանը պահպանման խնդիրը զուր չանցաւ վեց Մեծերի համար. երկար գործունէութիւնից յետոյ, վերջապէս, — Մեծ Ոճրագործի խաթեր համար — նրանք յանգան համաձայնութեան... ոչինչ չանելու ... թողնելու, որ հայ ժողովուրդը կուլ գնայ այդ խեղճ գառնուկի, սուլթանի, որ եւրոպական տէրութիւններ ասված գայլերի ճանկն է ընկած... Եւ այսպէս Արևելեան խնդրի հանգոյցն էլ բացվեցաւ... առանց լուծվելու:

Գառն էլ մնաց կենդանի, գայլերն էլ կուշտ — դա էլ արդէն հին առակ է:

*
* *

Կրէտէն կրկին արեան ու բոցի մէջ է: Աշխարհիս Մեծերը, ձեռք ձեռքի տըված ալլահատիպ սուլթանի հետ, „բարենորոգումներ մտցրին“ Կրէտէում... Ինչպէս միշտ, այդ „բարենորոգումներն“ այն իդէալական յատկութիւնն ունեցան, որ մինչև օրս մնացին „իդէալ,“ և բնաւ չը դարձան իրական, մի բան, որ խնկոյն կը զրկէր նրանց իր սիրամարգային փետուրներից... Նկարված սուլթանական թղթի վրայ... Թշուա՞ռ թուղթ, չա՞ր թուղթ, որքա՞ն և որքա՞ն այդպիսի „իդէալներով“ է ծանրաբեռնված ու խծբըծված... Միւս աշխարհի բաղդաւորութեան մասին երազող մահմետական մարգարէութիւնն, անտարակոյս, շատ բնական գործ է անում, երբ այս աշխարհի վրայ չէ ուզում իրականացած տեսնել ոչ մէկ „իդէալ“...

Այդպէս է հայերիս հետ. այդպէս եղաւ կրէտացիների հետ... Եւ վեց Մեծերը կրսկսեն հիմա հաշել այդ առանձնացած կղզի վրայ, որ տխմարութիւն ունի դժգոհ, բողոքող լինելու և պահանջելու իրականը, փոխարէն սուլթանական „իդէալի“... Ի՞հ, ի՞նչ կարելի է ասել դրա դէմ... Տխմարութիւն է այդ ցանկութիւնը, բայց ի՞նչ կուզէք, որ կրէտացիներն անեն: Սոխակին առակներով չէ կարելի կերակրել... Վեց Մեծերն՝ իրանց գթառատ Մարդասպանի հետ կուշտ են, կուշտ են ուրիշների թշուառութեամբ, ուրիշների իրականի պահանջներով, ուրիշների արիւնով... Բայց կուշտը քաղցածին չի հասկանալ... Եւ եթէ այս վերջինն ըմբոստանում է, դա ապացոյց է, որ նա մարդ է, և գիտէ, թէ ինչ է ուզում, և հասկանում է, թէ ինչպէս պէտք է ձեռք բերէ իր ուզածը:

Եւ Մեծ Վեցը սովոված կը լինեն „իդէալը“ դարձնել իրական... եթէ երկիւղ են կրում պատերազմ ունենալուց Արևելքում... Կարմիր աքաղաղը Կրէտէում արիութեամբ է կատարում իր դերը... Նրա երգն աւելի անուշ է գալիս ամեն երկրի ստրուկների ականջին, քան Պառնասեան ամենագեղաձայն սոխակի կըլկլոցները Վեց Մեծ կուշտերի ականջին...

Ամեն ժամանակ և ամեն տեղ արդէն այդպէս է եղել միշտ — դա արդէն հին առակ է:

Իսկ եթէ Վեց Մեծերն այս անգամ էլ լինեն նեցուկ սուլթանին, սրա շղթայի տակ խեղդվող ստրուկներն էլ կերգեն Կարմիր Աքաղաղի երգը, որ աւետում է նոր արշալոյս, նոր օր:

Այդ կը դառնայ նոր առակ...

ԿԱՏԱՐԱԾԻ ԺԱՄԱՆԱԿ

ՏԵՍԱՐԱՆ

ԱՂՋԻԿԸ.
Ո՜հ, ի՞նչ քաղցըր մէկ ըզգացում
Յափշտակէ իմ հոգիս.
Սիրտըս ծմէ ներքին հարցում,
Անուշ նեղէ իմ հոգիս:

ՊԱՏԱՆԻՆ.
Նայէ, գիշերն է գեղեցիկ
Լուսինն անուշ կը դիտէ
Աչիդ մէջը մելամաղձիկ...
Ասա, սէրըս նա գիտէ՞...

ԱՂՋԻԿԸ.
Հեռուն առուն կը մռմնջայ,
Կը մըմնջայ ու կանցնի,

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ.

Անբաղդ որսը որսորդներից է փախչում   Անբաղդ որսը առիւծի երախն է թռչում:

«ԱԳՏԱԿ»-ի հանելուկներ

Ռէպուս թիւ 10

Թիւ 9 ռէպուսի լուծումը

—Թուր-քած-Տիր-ա-բէ-թուք-իւն-ը-մաչ-վան-դուռ-ը-հ-աս ածէ ող-վրան-սագ-ան-փող-ը-ո-չա-լ-եւրոպա-կանա-նչ-ամ-ա-ծա-նու-թիւ-նը-քար-օղ-եղ-Այ-նա-կա-դել:—

—Թուրքիոյ Տիրապետութիւնը մաչվան դուռը հասած է ու վրանսագան փողը ու ալ եւրոպական անհամաձայնութիւնը քար օղ է զԱյն պաշտել:—

—Թուրքիոյ տիրապետութիւնը մաչուան դուռը հասած է ու Ֆրանսական փողը ու ալ եւրոպական անհամաձայնութիւնը կարող է կայն պաշտել:—

Սիրտը տրխուր կը տրտնջայ,
Սիրտը սէրիս կը յանձնի:

ՊԱՏԱՆԻՆ·

Թաքուն կայծը քո վառ աչիդ
Աստղկան պէս զիս նայի,
Թեթեւ շունչը քո հառաչիդ
Ասես զեփիւռ կը սահի:

ԱՂՋԻԿԸ·

Այսօր մենակ պըտրտէի
Դաշտը, ծաղիկ մ՚քաղեցի.
„Ընկէ՞կ քեզ պէս ես փթթէի“,
Ըսի ծաղկին, պագեցի...
Մէկէն շուրթէս տերեւները
Անոր՝ գետին թափուեցան...

ՊԱՏԱՆԻՆ·

Լի՛ս, բիւրբիւրի բարեւները
Ոստի տակէն հոսեցան...
Եկո՛ւր մօտիկ... Երկինքն հեռուն
Երկրին հետ, տե՛ս, կը զրկուի,
Լուսինն ի մէջ քո աչերուն
Խաղայ, փայլէ ու զարկուի:

ԱՂՋԻԿԸ·

Ես լըսեցի այսօր մի երգ.
Իմ՚ մայրս էր այն որ կանչէր —
Տըխո՞ւր, տըխո՞ւր... Կրծքիս մի վէրք,
Մի վէրք որ զիս կը տանջէր,
Վարդի փուշէն ըստացայ,
Ես ըստացայ եւ չի մոռցայ...
Մայրըս կերգէր, կուլա՞ր, կուլա՞ր,
Կըսէր՝ „Սե՛ւ քաղդ, հըլա՞ր հըլա՞ր“...

ՊԱՏԱՆԻՆ·

Մգկիթին մէջ այսօր թիւրքեր
Ժողուած՝ երկար խօսէին...

ԱՂՋԻԿԸ·

Հայրըս ախով կոտրէր ձեռքեր,
Արցունք աչքէն հոսէին,
Կոտրէր ձեռքերն իր եւ կըսէր —
„Կնի՛կ, աղօթէ... կնի՛կ, մի՛ լար...
„Մեր վերջ հասա՛ւ...“ Մայրըս լըսէր,
Կը նայէր զիս ու կուլար...
Զը հասկըցայ...

ՊԱՏԱՆԻՆ·

Ա՜խ, ինչ անուշ
Բուրմունք կուգայ դաշտերէն,
Քո ծամերէ՞ն, իմ՚ Վարդանուշ,
Քո ծամերու դաշտերէն:

ԱՂՋԻԿԸ·

Ա՜հ, երբ որ գայ, հատնի ամառ,
Զամս զարդարեմ՝ հարսնիքիս
Հասուն, ոսկի, ինչպէս ամառ,
Լի հասկերով՝ հարսնիքիս:

ՊԱՏԱՆԻՆ·

Մեր դաշտերուն դու ծաղկէ փունջ,
Քո մէջն ամառ ու զարուն,
Քո մէջ սիրոյս անմեղ մընմունջ,
Իմ՚ նըշանա՛ծ, իմ՚ սիրո՛ւն:

ԱՂՋԻԿԸ·

Երէկ մանիկ մատրս ցաւցուց,
Ցաւցուց մատրս — հանեցի.
Ընկաւ գետին... մընացի...
Ընկաւ գետին, զարկուեց քարին,
Ասես տնքաց հարուածէն,
Տնքաց, կորա՜ւ... Դեւին, հարին
Շատ ինդրեցի: Իմ՚ լացէն
Զը զըթացին... Ծունր ընկայ,
Պաղատանքով... Խե՜ղճ մանիկ
Կորա՜ւ, կորա՜ւ,— ալ չը կայ...
Ցաւէն սիրտըս կը հատնի...

ՊԱՏԱՆԻՆ·

Սիրոյս օղակն է քեզ մատնի,
Դերի սրտիդ նուրբ վանդակին,
Մետաքս, մարգարիտ այդ քանդակին,
Սրտիս թիլիսմն է քեզ մատնի...
Երբ որ ցաւէն սիրտըս հատնի,
Այն ժամանակ երկնէն զաղտնի,
Գաղտնի մէկ աստղ իր օղակով
Դառնայ մատիդ շուրջ բոլորով —
Այն ալ քեզի սիրոյս մատնի:

ԱՂՋԻԿԸ·

Անցեալ օրն ինծ՚ արեւծագին
Փափուկ զեփիւռն արթնցուց.
Ելայ պատրէզ: Ծառի տակին
Թռչնակը քան մը հարցուց,
Զը հասկըցայ, լացի՞, լացի՞...
Մատղաշ ծառ մը՝ ցօղերը վրան,
Կախուած, տըխո՞ւր... Գրկեցի,
Գրկեցի ես անոր իրան,
Կրծքիս ամուր սեղմեցի...
Մէկէն դողաց ու թափուեցան,
Թափուեցան վրաս ցօղերը՝
Արցունքի պէս... ու թափուեցան
Աչքէս սրտիս ցօղերը...

ՊԱՏԱՆԻՆ·

Ինչո՛ւ կուլաս... ի՞նչ եղաւ քեզ...

ԱՂՋԻԿԸ·

Զիս զէշ կը զգամ... քան մը կըլլամ...
Ի՞նչ սիրուն է, ի՞նչ խաղաղ ժամ...
Ա՜հ, փոթորիկ մը կը զգամ ես...

ՊԱՏԱՆԻՆ·

Անուշ, անո՜ւշ, իմ՚ Վարդանուշ,
Եկուր մօտիկ... Տե՛ս, ինչ քնքուշ
Աստղերը մեզ կը ժպտան,
Մեզի խօսին ու խնդան:

ԱՂՋԻԿԸ·

Ա՜հ, ի՞նչ հաճ լոյս, ի՞նչ լոյս տեսայ...
Լոյս մը վազաւ հոգիէն...
Աղմուկ լըսեմ...

ՊԱՏԱՆԻՆ·

Ոչինչ... անտառն է հովէն...

ԱՂՋԻԿԸ·

Շա՜տ լոյս տեսնեմ՚... երկինք կարծես
Խաւարեցաւ... կը վախնամ՚,
Ա՜հ, կը վախնամ՚...

ՊԱՏԱՆԻՆ·

Հերիք կոծես.
Մթնեց աստղացն այն երամ՚,
Այն՝ խաւարեց վառ լուսին,
Նայելով քո երեսին,
Որ պայծառ է քանց լուսին:

ԱՂՋԻԿԸ·

Գոչեն, կանչեն, ճըշան ու լան...
Ո՜հ, ի՞նչ խուժան... այն ի՞նչ կըլլան...
Տե՛ս, տե՛ս, քաղաքը կայրի...

ՊԱՏԱՆԻՆ·

Այն՝ արշալոյսն կը ծայրի,
Հրդեհ երկինքն է պատեր,
Հրդեհէն սիրտս է հատեր...
Եկո՛ւր մօտիկ...

ԱՂՋԻԿԸ·

Շուտ զրկէ զիս:
Կը վախնամ՚ ես... Տե՛ս հոգիս
Արիւն, արիւն...

ՊԱՏԱՆԻՆ·

Հանգի՛ստ, հոգիս:
Այդ արիւնը, ի՞մ՚ անգին,—
Սիրոյ պըտուղն է արիւնը,
Այդ արիւնը... այդ զարունը...

ԱՂՋԻԿԸ·

Օ՜հ, կարծը քան, քան մը կածրը
Խրուեց կրծքիս... ասես կապար:

ՊԱՏԱՆԻՆ·

Զիս ալ, զիս ա՜լ... Խօսէ ցածը.
Դրկէ զիս պինդ... Մեր սիրոյց
Այդ մեր սրտերն են սիրահար
Որ պատառուին:

ԱՂՋԻԿԸ·

Կը մարիմ՚ ես... Զիս սառոյց,
Սառոյց պատէ... Քովս առուն
Հոսէ ի՞նչ տաք հոսանքով...:

ՊԱՏԱՆԻՆ·

Կարմիր առուն, իմ՚ սիրուն,
Այդ առուն մեր բերկրանքով
Պիտ պրսակենք. ո՜վ Վարդանուշ,
Այդ՝ առուն է մեր կեանքի,
Մեր միութեան, երազն անուշ
Մեր ապագայ բերկրանքի:

ԱՂՋԻԿԸ·

Ուժըս հատաւ... դողամ՚ կիյնամ՚...

ՊԱՏԱՆԻՆ·

Ես ալ... ես ա՛լ քեզ միանամ՚...

ԱՂՋԻԿԸ·

Աչքերս մթնեն...

ՊԱՏԱՆԻՆ·

Ինչ քա՜ղցր երազ...

ԱՂՋԻԿԸ·

Դէպ վեր, դէպ վե՞ր կը սըլանամ՚...

ՊԱՏԱՆԻՆ·

Ո՜հ, ի՞նչ թովչանք իջաւ վերաս...

ԱՂՋԻԿԸ·

Սէր... քաղդ... կեանք... մա՜հ...

ՊԱՏԱՆԻՆ·

Կեա՜նքդ յաւիտեան,
Սէր յաւիտեան... Համբոյր... համբո՜յր...
Ծարաւ կըզգամ՚...

ԱՂՋԻԿԸ·

Համբո՜յր... Վարդան...

ՊԱՏԱՆԻՆ·

Մահ... մա՜հ .. Համբո՜յր... անմահ
աղբիւր...

(Կը մեռնին գրկախառնուած՝ առաջին ու վերջին համբոյրով: Կոտորածը կը շարունակուի: Հրդեհ, աղմուկ, մահ...)

ԽԵՆԹԸ.

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Փառամոլութեան հիւանդութեամբ բռնված-ները թշուկ են ամեն տեսակէտից, որպէս և հասակով, թէև իրանց արտաքինը նման լինի սովորական մարդու:

ԺՈՒՐԵՐ·

* * *

Մանք սիրում են ասել այն, ինչ որ գիտեն և ոմանք այն, ինչ մտածում են:

ՆՈՑՆ·

* * *

Աւելի լաւ է յարուցանել մի խնդիր՝ առանց այն լուծելու, քան լուծել այն՝ առանց յարուցանելու:

ՆՈՑՆ·

* * *

Խոստովանութեան առևտրի մէջ գործածեցէք միայն ոսկէ ու արծաթէ դրամ:

ՆՈՑՆ·

* * *

Ոչինչ չէ կարելի մոցնել այն գլխում, որը ինքն իրանով է լիք:

ՆՈՑՆ·

* * *

Լաւ համարել այն, ինչ լաւ չէ՝ նոյնն է եթէ լաւը վատացնել:

ՆՈՑՆ·

* * *

Երբ բաղխում՝ ես որ և է ճշմարտութեան դուռ, որը չէ բացվում, այն ժամանակ պէտք է փորձել մտնել այնտեղ պատուհանից:

ՆՈՑՆ·

* * *

Նա, ով լուսաբանում է որ և է խնդիր, գոյն է տալիս ու ոսկեզօծում ճշմարտութեանը:

ՆՈՑՆ·

* * *

Ոմանք յեղափոխութեան վրայ նայում են ինչպէս կոշկակարը երկրագործութեան վրայ:

Ա·

* * *

Ազատութիւնը մինչև այժմ՝ միշտ եղել է արգիլեալ պտուղ: Հէնց այդ է պատճառը, որ նա սիրված է և ձգտում են այն ձեռք բերել: Միայն թէ Ադամն ու Եւան այն ձեռք բերելով, կորցրին դրախտը, իսկ մարդկութիւնն այժմ այն ձեռք բերելով, կը գտնէ դրախտը:

ՆՈՑՆ·

* * *

Ճշմարտութիւնը մի սքանչելի վարդ է. նա մեզ տալիս է ճշմարտի զգացումը, ինչպէս վարդը՝ գեղեցկի զգացումը: Բայց նա էլ, ինչպէս վարդը, ունի գաղտնի փուշեր:

Ուղղամտութիւնը սուր է, որ կտրում է՝ առանց արիւն թափելու:

ՆՈՑՆ·

* * *

Ճշմարիտ հերոսն իր քաջութեամբ, ինչպէս և ճշմարիտ տաղանդն իր գործով, պարծենալ չը գիտէ, որովհետև մէկի քաջութիւնն ու միւսի տաղանդաւոր գործն իրանց թւում են շատ բնական:

ՆՈՑՆ·

* * *

Կեղծ մարդիկն ամենքին և ամեն բան, որպէս և ամեն միտք ու ամեն զգացում, ներկայացնում են իրանց և ըմբռնում՝ իրանց սեփական կերպարանքի համաձայն. նրանց աչքին բնութիւնն իսկ կեղծիք է թւում:

ՆՈՑՆ·

* * *

Օվկէանոսն ունի իր յատակը, իսկ խոր զգացումն ու միտքն անյատակ են:

ՆՈՑՆ·

* * *

Որքան մեծ է մեծ մարդը, այնքան էլ մեծ է նրա աչքին ամբողջ տիեզերքը, այնքան էլ նրա աչքին մեծ է արևը, մեծ է միտքը, մեծ է զգացումը, մեծ է կեանքը, մեծ է մարդկութիւնը, մեծ է ամենափոքր կենդանին, ամենափոքր բոյսը:

ՆՈՑՆ·

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ·